ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԱՄ-2019/36, 20.03.2019թ.

Բողոք ներկայացնող անձ՝ «Ռանել» ՍՊԸ

Պատվիրատու՝ Արամուսի համայնքապետարան

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝ «ԿՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-19/2» ծածկագրով գնանշման հարցում, աղբամանների ձեռքբերում:

Բողոքի պահանջը՝

Դադարեցնել Արամուսի համայնքապետարանի կարիքների համար կազմակերպված «ԿՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-19/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.03.2019թ. թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Ռանել» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Մ. ԱՆԱՆՅԱՆ, ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Տ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Տեղեկացնում ենք, որ բողոքի քննության նպատակով հրավիրվող նիստերին առցանց կարող եք հետևել https://www.e-gov.am/gnumner/ հղումով կայք-էջում:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Սույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը ներառյալ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

Բողոք բերող՝ «ՌԱՆԵԼ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Ազատության 9/9
հեռ: (091) 810021
Էլ.փոստ՝ avetisyanshin@mail.ru

Պատվիրատու՝ Արամուսի համայնքապետարան
Հասցե՝ ՀՀ, Կոտայքի մարզ, համայնք Արամուս, Կենտրոնական 17

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
Արամուսի համայնքապետարանի կարիքների համար՝ աղբամանների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԿՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-19/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ

ԲՈՂՈՔ

- Բողոքի նախապատմությունը և փաստերը

Արամուսի համայնքապետարանի կարիքների համար կազմակերպվել է «ԿՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-19/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին 22.02.2019թ. մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ՌԱՆԵԼ» ՍՊԸ-ն և ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հարցում է կատարել ՀՀ ԿԱ ՊԵԿ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Ի պատասխան վերոնշված հարցման՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից տրվել է եզրակացություն, համաձայն որի «ՌԱՆԵԼ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ /22.02.2019թ. / ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություն 36,000 ՀՀ դրամ:

Այնուհետև, գնահատող հանձնաժողովի կողմից «ՌԱՆԵԼ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու հիմքով:

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱԾԽԱՅԻՆԿԱԶՄ
ՄՏԻՑ N 5 12023
«20» 03 2019 թ.

- <u>Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.</u>

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ *հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով* ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով և 44-րդ կետով սահմանված կարգով տրամադրված եզրակացության համաձայն՝ «ՌԱՆԵԼ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի 36,000 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորություններ:

Հայտնում ենք, որ «ՌԱՆԵԼ» ՍՊԸ-ի մոտ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ առկա ժամկետանց հարկային պարտավորությունը առաջացել է **<<ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին>>** ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարման գծով:

<<Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի>> քաղվածքի համաձայն՝ «ՌԱՆԵԼ» ՍՊԸ-ն 22.02.2019թ. դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունի: Եվ պետք է նշել, որ Ընկերության միասնական հաշվի պատկերում արտացոլված չէ դրոշմանիշների վճարի վերաբերյալ որևէ տեղեկատվություն, և «ՌԱՆԵԼ» ՍՊԸ-ն հայտը ներկայացրել է՝ հիմք ընդունելով <<Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի>> տվյալները, ըստ որի՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չուներ: Միևնույն ժամանակ, <<Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի>> քաղվածքում վկայակոչված է ՀՀ ՊԵԿ նախագահի դեռևս 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ն հրամանը:

Հայտնում եմ, որ որևիցե եղանակով երբևիցե չեմ ծանուցվել <<ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին>> ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարի գծով առկա պարտավորության առկայության մասին: **Փաստացիորեն առկա է եղել արձանագրված**

պարտավորության մասով «ՌԱՆԵԼ» ՍՊԸ-ի իրազեկված չլինելու հանգամանքը, քանզի Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ տեղեկություններ կարող էր ստանալ միայն <<Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի>>-ից, իսկ ինչպես արդեն նշվել է, նշված քարտի տվյալների համաձայն՝ Ընկերության հայտը ներկայացնելու օրը չունի հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով որևէ պարտավորություն:

Գտնում ենք, որ նման դեպքում արձանագրված պարտավորությունը չի կարող դիտարկվել «ՌԱՆԵԼ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ...:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ՝

Դադարեցնել Արամուսի համայնքապետարանի կարիքների համար կազմակերպված «ԿՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-19/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.03.2019թ. թիվ 3 արձանագրության համաձայն՝ «ՌԱՆԵԼ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

Առդիր՝ 9 թերթ:

Հարգանքով՝

«ՌԱՆԵԼ» ՍՊԸ-ի տնօրեն՝ _____

20.03.2019թ.